

Անվտանգության ինչպես վարվել

կանոններ .

Անվտանգության կանոնները երեխաներին սովորեցրեք աստիճանաբար: Նրա մոտ չպետք է կասկած ծագի, թե արտաքին աշխարհը վատն է: Երեխան պետք է լինի ուշադիր ու որոշ իրավիճակներում՝ զգույշ, իսկ մնացած ժամանակ վայելի կյանքի ամենասքանչելի ժամանակաշրջանը՝ մանկությունը:

1. Ո՞ւմ համար կարելի է բացել դուռը, եթե փոքրիկը տանը մենակ է:

Չի կարելի դուռը բացել օտար մարդկանց առջև: Այդ մասին գիտեն բոլորը: Համոզվեք, որ փոքրիկը ճիշտ է հասկացել այս կանոնը: Շատ երեխաներ մտածում են, որ դռան հետևում գլխավոր վտանգը տղամարդիկ են: Սակայն փոքրիկներին պետք է բացատրել, որ վտանգավոր կարող են լինել նաև բարի տատիկներն ու գեղեցիկ մորաքույրները, ինչպես նաև անմեղ թվացող երեխաները:

2. Օտարը վստահեցնում է, որ ծնողները ուղարկել են փոքրիկի հետևից: Ինչպե՞ս վարվել:

Նման դեպքերում պետք է երեխայի հետ գաղտնաբառ որոշել: Եթե անծանոթը գաղտնաբառը չգիտի, կամ ասում է, թե մոռացել է, ոչ մի դեպքում չի կարելի նրան լսել ու հետը գնալ: Նման պարագայում փոքրիկը պետք է մոտակա մեծահասակ անցորդների ուշադրությունը հրավիրի ու նրանց պատմի, որ անծանոթն ուզում է իրեն տանել:

3. Ինչպե՞ս վարվել, եթե անծանոթը բռնել ու բաց չի թողնում երեխային:

Ամենաճիշտ գործողությունը՝ կողքի մարդկանց ուշադրությունը հրավիրելն է: Եթե անծանոթը անցորդիներին ասի, որ փոքրիկն իր երեխան է, փոքրիկը պետք է գոռա, որ չի ճանաչում այս մարդուն և նա փորձում է փախցնել իրեն: Պետք է պայքարել ամեն ձև: Նույնիսկ քար վերցնել և կոտրել մոտակա պատուհանը կամ ավտոմեքենան: Դրանց վնասը փոխհատուցելն այնքան էլ թանկ չէ, ինչքան փոքրիկի կյանքը:

4. Անծանոթ մորաքրոջից կոնֆետ կարելի՞ է վերցնել:

Երբեք չի կարելի անծանոթ մարդկանցից սնունդ, խաղալիք կամ այլ

իրեր վերցնել: Սովորեցրեք փոքրիկին, որ նա երբեմն կարող է օգտվել հարևան տատիկի առատաձեռնությունից, երբ նա հյուրասիրում է բոլոր երեխաներին, բայց անձանոթ մարդկանցից չի կարելի որևէ բան վերցնել:

5. Ի՞նչ անել, եթե ծնողները տանը չեն ու ինչ-որ մեկը փորձում է բացել դուռը:

Պետք է զանգել ծնողներին, ապա զանգահարել փրկարար ծառայություն՝ 911 կամ բջջային հեռախոսից՝ 112: Ճիշտ է, փրկարարների հետ խոսակցությունը կարող է երկար տևել, բայց այդ ընթացքում ծնողները կարող են զգուշացնել հարևաններին, որպեսզի նրանք օգնության հասնեն:

6. Անձանոթ մեծահասակը օգնություն է խնդրում: Ինչպե՞ս վարվել:

Եթե փողոցում փոքրիկից անձանոթը օգնություն է խնդրում, երեխան պետք է մերժի: Պետք է կտրուկ ու պարզ պատասխանել «ոչ», մոտակայքում փևտրի մեծահասակի և ուղղորդի օգնություն խնդրող մեծահասակի մոտ: Եթե մարդուն իրոք օգնություն է պետք և տարածքում այլ մեծահասակներ կան, ապա նա երեխային չի դիմի:

7. Եթե փոքրիկը սպասում է վերելակին ու նրան են մոտեցել անձանոթներ, կարելի՞ է օգտվել վերելակից նրանց հետ:

Օտարների հետ վերելակ մտնել չի կարելի: Սովորեցրեք Ձեր փոքրիկին մերժել, եթե նրան առաջարկեն մտնել վերելակ: Երեխան կարող է ասել, որ սպասում է ծնողներին, որոնք ուր որ է կմոտենան: Եվ հիշեցրեք նրան, որ վերելակ կարելի է մտնել միայն լավ ծանոթ մարդկանց հետ:

8. Եթե համացանցում ինչ-որ մեկը սպառնում է երեխային կամ ընտանիքին, ի՞նչ պետք է անել:

Պետք չէ ենթարկվել սադրանքներին ու վախենալ չարագործների սպառնալիքներից: Եթե երեխան սպառնալիքներ է ստանում, նա պետք է անմիջապես տեղեկացնի ծնողներին կամ համապատասխան մասնագետներին: Յուրաքանչյուր ծնող պետք է երեխայի հետ վստահելի հարաբերություններ ստեղծի, որպեսզի երեխան կարողանա անկեղծանալ ծնողի հետ:

9. Ինչպես վարվել, եթե փոքրիկը միայնակ հայտնվել է մեծ ամբոխի մեջ:

Սովորեցրեք երեխային պահպանել հանգստությունը, եթե հանկարծ հայտնվի ամբոխի մեջ: Նա պետք է աստիճանաբար տեղաշարժվի դեպի ամբոխի եզր, բայց ոչ ամբոխի ընթացքին հակառակ ուղղությամբ: Եթե երեխան ամբոխի մեջ է հայտնվել ծանոթ մեծահասակի հետ, պետք է խնդրի նրան՝ իրեն ուսերին նստեցնել:

10. Ի՞նչ անել, եթե փոքրիկը զգա, որ քեզ հետևում են:

Նման իրավիճակում ամենաճիշտ լուծումը որևէ մեծ խանութ (օրինակ սուպերմարկետ) կամ այլ մարդաշատ վայր մտնելն ու ծնողներին զանգահարելն է:

11. Ի՞նչ անել, եթե երեխան ամպրոպի ժամանակ փողոցում է:

Եթե փոքրիկը ամպրոպի ժամանակ գտնվում է փողոցում, նախևառաջ պետք է անվտանգ ծածկ գտնի: Կարելի է մտնել մոտակա խանութը կամ շքամուտքը: Եթե տարածքում նման թաքստոց չկա, պետք է թաքնվել այգու ցածր ծառերի ու թփերի տակ: Չի կարելի գտնվել մետաղական կոնստրուկցիաների, ջրամբարների, բարձր ծառերի ու ավտոմեքենաների մոտ: Հիշեք, որ ամպրոպից հետո ճայթող կայծակն ամենավտանգավորն է:

12. Ի՞նչ անել, եթե վարդակից ծուխ է դուրս գալիս, իսկ տանը մեծահասակ չկա:

Եթե հրդեհավտանգ իրավիճակ է ստեղծվել ու ծնողները տանը չեն, անմիջապես պետք է զանգահարել փրկարար ծառայություն՝ 911 կամ բջջային հեռախոսից՝ 112: Քանի դեռ հրշեջ մեքենան չի մոտեցել, երեխան պետք է օգնության կանչի հարևաններին: Հրդեհն ինքնուրույն հանգցնել չի կարելի:

13. Ի՞նչ անել, եթե տանը գազի հոտ է զգացվում:

Երեխան պետք է անմիջապես դուրս գա տնից, օգնության կանչի հարևաններին ու զանգահարի 104՝ գազի վթարային ծառայություն:

14. Կարելի՞ է վերցնել դեղատուփը, եթե ծնողները տանը չեն:

Պատմեք երեխային դեղանյութերի վտանգավորության մասին: Նույնիսկ եթե երեխան վստահ է, որ նուրոֆենը գլխացավն անց է կացնում, առանց ծնողի չի կարելի վերցնել դեղատուփը: Վատ զգալու դեպքում պետք է զանգել մայրիկին, հայրիկին կամ այլ մոտիկ հարազատի: